

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՍՔ Երկուշաբթի, 10 Մարտի, 2008

Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ արեւմտեան թեմի առաջնորդ Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի գլխաւորութեամբ եւ Լոս Անջելոսի շրջանի հոգեւորականների մասնակցութեամբ, Երեքշաբթի, Մարտի 4-ի երեկոյեան ժամը 7:30-ին Բըրբանքի առաջնորդարանում կատարուել է հոգեհանգստեան մասնաւոր պաշտօն՝ Հայաստանում Մարտի 1-ին տեղի ունեցած բախումների զոհերի յիշատակին: Արարողութեանը ներկայ է եղել Լոս Անջելոսում Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոս Արմէն Լիլոյեանը: Ընթերցուել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ի ուղերձը՝ Մարտ 1-ի իրադարձութիւնների վերաբերեալ:



ՀՅԴ Քրեզնթա Հովտի Հայ Դատի Յանձնախմբի կազմակերպութեամբ Մարտի 3-ին տեղի է ունեցել համայնքային հանդիպում, որի ընթացքում ելոյթ են ունեցել ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի գործադիր տնօրէն՝ Անդրանիկ Քիզիրեանը եւ համայնքային կապերի հարցերով պատասխանատու՝ Հայկ Յովսէփեանը, տեղեկութիւններ յայտնելով Սիացեալ Նահանգներում առաջիկայ Նոյեմբերին կայանալիք նախագահական ընտրութիւնների վերջին զարգացումների, Հայոց Ցեղասպանութեան ճանաչմանը վերաբերող թիւ 106 բանաձեւի, Լեռնային Ղարաբաղի ներկայիս իրավիճակի եւ Հայաստանին տրամադրուող ամերիկեան օժանդակութեան մասին: Հանդիպումը կայացել է ամերիկահայութեանը յուզող հարցերի կապակցութեամբ համայնքի անդամներին իրազեկ պահելու Հայ Դատի Յանձնախմբի նորագոյն նախաձեռնութեան շրջանակներում: Նշենք, որ Փետրուարի 28-ին նոյնանման հանդիպում է տեղի ունեցել նաեւ Կալիֆորնիայի ծովածոցի շրջանի Լօսիթա քաղաքում, ուր Հայկ Յովսէփեանն ու Ծովածոցի շրջանի Հայ Դատի Յանձնախմբի ատենապետ Շանթ Պոյաճեանը կարեւորել են ամերիկեան քաղաքական գործընթացներին հայ համայնքի գործուն մասնակցութիւնը:



Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի յատուկ պատուիրակութիւն Փետրուարի 22-ից 24-ը մասնակցել է Կալիֆորնիայի Հանրապետական կուսակցութեան ամենամեայ գարնանային համագումարին, որը տեղի է ունեցել Սան Ֆրանցիսկոյում: Պատուիրակութիւնը գլխաւորել է Հայկ Յովսէփեանը: Համագումարի ընթացքում պատուիրակութեան անդամները բարձրացրել են ամերիկահայութեանը յուզող հարցեր: «Մենք ներկայ գտնուեցինք համագումարին, որպէսզի վստահանանք, որ Կալիֆորնիայի Հանրապետական կուսակցութիւնը անդրադառնում է մեր համայնքի հարցերին», - ասել է Հայկ Յովսէփեանը: Համագումարի ընթացքում Հայ Դատի պատուիրակութեան անդամները հանդիպումներ ու շփումներ են ունեցել Հանրապետական կուսակցութեան պատգամաւորների, անդամների ու ղեկավարների հետ:



Հայ մշակութային հիմնարկութեան Գլենդէլի մասնաճիւղի նախաձեռնութեամբ Ուրբաթ, Մարտի 7-ին, Գլենդէլի «Renaissance» սրահում տեղի է ունեցել Գլենդէլի Երիտասարդական կենտրոնի կառուցման հանգանակային ձեռնարկը, որին ներկայ են գտնուել Հ.Յ.Դ. Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի եւ շրջանի կոմիտէների, Ազգային կենտրոնական վարչութեան ներկայացուցիչները, պետական անձինք, որոնց թւում Կալիֆորնիայի նահանգային խորհրդարանի անդամ Փօլ Գրիգորեանը, Գլենդէլի քաղաքապետ Արա Նաճարեանը եւ ասելի քան 400 հիւրեր: Միջոցառման ընթացքում հանգանակուել է մօտաւորապէս 600 հազար դոլար, որում յատկանշական է Քազանջեան եղբայրների կատարած 150 հազար դոլարի նուիրատուութիւնը:



Համազգային Հայ կրթական ու մշակութային ընկերակցութեան Լոս Անջելոսի մասնաճիւղի «Աւանդոյթների միաւոր»-ի կազմակերպութեամբ Փետրուարի 24-ին երեկոյեան տեղի է ունեցել դրամահաւաքի յատուկ միջոցառում ամերիկահայ երիտասարդ բեմադրիչ Ռաջըր Գուբէլեանի «Վարդան Մամիկոնեան» շարժանկարային ծրագրի օգտին: Միջոցառմանը ելոյթ է ունեցել միաւորի պատասխանատու Ռիթա Դեմիրճեանը, որը դուատանքով է անդրադարձել Ռաջըր Գուբէլեանի նախաձեռնութեանը եւ կոչ արել բոլորին, որ նեցուկ կանգնեն հոլիվուդեան բարձր մակարդակով իրագործուող ու նկարահանուող սոյն շարժանկարի աշխատանքներին: Միջոցառմանը ելոյթ է ունեցել նաեւ «Լինսի» հիմնարկի գործադիր տնօրէն, «Քալիֆոնիա քուրիըր» շաբաթաթերթի տնօրէն Յարութ Սասունեանը, որը խոստացել է որեւէ ճիգ չխնայել շարժանկարի յաջողութիւնը եւ նկարահանումը ապահովելու համար: Միջոցառմանը, որին ներկայ են եղել բազմաթիւ ամերիկահայ երիտասարդ արեւեստասէրներ, հանգանակուել է աւելի քան 50 հազար դոլար:



Համազգային Հայ կրթական ու մշակութային ընկերակցութեան Սան Ֆրանցիսկոյի «Աղբալեան» մասնաճիւղի նախաձեռնութեամբ Մարտի 2-ի երեկոյեան ժամը 4-ին, Սան Ֆրանցիսկոյի հայ կենտրոնի «Սարոյեան» սրահում տեղի է ունեցել Հայաստանի «Շողակն» հայկական համոյթի ելոյթը, որին ներկայ են գտնուել աւելի քան 400 հայ եւ օտարազգի հանդիսատեսներ: Բացման խօսքով հանդէս է եկել «Համազգային»-ի «Աղբալեան» մասնաճիւղի ատենապետուհի Ռուբինա Գասպարեանը, նշելով, որ սոյն հանդէսը տեղի է ունեցել «Համազգային»-ի հիմնադրման 80-ամեակին նուիրուած հանդիսութիւնների շրջանակում: Նա նաեւ յիշել է, որ «Շողակն» համոյթը Միացեալ Նահանգների 24 քաղաքներ կատարելիք շրջագայութիւնը սկսել է New York-ի «Carnegie» համբաւաւոր սրահի համերգով, որին հետեւել է Սան Ֆրանցիսկոյի ելոյթը:

Այս լուրերը տրամադրուած են
ՀՀԳ Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէի
Հանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations.ARF@hotmail.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:
Լուրերը կարելի է վերահրատարակել: